ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 784-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 18.05.2006թ.թիվ 912-Ն որոշման 26-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունել Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Տ.Մեծի փող.30 շենք15 բնակարանի բնակիչ Հենրիկ Լևոնի Հովհաննիսյանի դիմումը ըստ սեփականության տեխնիկական անձնագրի իրեն պատկանող Ճամբարակ քաղաքի Տ. Մեծի փող, 7/48 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքում կատարված ներքին ձևափոխման աշխատանքներն օրինականացնելու մասին,ինչպես նաև նկատի ունենալով,որ տարածքի կրող և հիմնական կոնստրուկցիաները չեն փոփոխվել ինչպես նաև շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ըստ սեփականության տեխնիկական անձնագրի Ճամբարակ քաղաքի Տ.Մեծի փող. թիվ 7 բազմաբնակարան շենքի 05-002-0101-0117-001-48 կադաստրային ծածկագրով

գտնվող Հենրիկ Հովհաննիսյանի կողմից կատարված ոչ բնակելի տարածքի ներքին ձևափոխման աշխատանքները՝ /4 հատ ներքին դռան ապամոնտաժում, 61,8քմ ընդհանուր մակերեսով 0,1սմ հաստությամբ ոչ հիմնական պատերի քանդում, 13,7քմ մակերեսով 0,1սմ հաստությամբ պատի շարվածքի իրականացում, 2 հատ տեղադրված դուռ/ ճանաչել օրինական համայնքի բյուջե՝ վճարելով յուրաքնչյուր ձևափոխված դռան համար 2000 դրամ /2 դուռ/ և 13,7քմ մակերեսով պատի շարվածքի համար՝ 3000 դրամ:

2. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշման ուժի մեջ է՝ Հենրիկ Հովհաննիսյանին սույն որոշման ընդունման մասին իրականացնելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ռ. ՕՀԱՆՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 06
ք. Ճամբարակ